

աշակերտների առաջնորդութիւնը կազմակի կերպով կանցնի համալսարանի ձեռքք։ *

ԵԿԵՂԵՑԻ ՀՅՅԵՍԽԱՆԵԱՅՅ

Ի՞՞Չ ԿԱՐԻՔ ՈՒԽԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ։

Այսպէս է այն երեք յօդուածներից մէկի վերնագիրը, որ, ինչպէս յիշուումէ Աքարատի սոյն համարի մէջ՝ նուիրել է մի զերմանացի մեր եկեղեցւոց արդի վիճակն վերսերեալ մի շարք ինսիրեների։ Օտարները մեզանով հետաքրքրուում են, օտարներն են մեր փոխանակ հարցուում։ Թէ ինչ կարիք ունենք մենք, եւ այդ կարիքներին դարձնն տանելու միջոցների վերայ մոռածում։ Հարկաւոր չ'որ զնէ նոցանից օրինակ առնենք՝ օտարներից սովորենք մեր ինչ եղածը եւ մեր կարիքներին դարձնն տանելու միջոցները։ Յիշեալ օտարականը մի շարք՝ ըստ մեծի մասին ուղիղ, խորհրդածութիւններից յետոյ զալիս է այն եղակացութեան, թէ հայերի համար կենակն հարց է այժմ։ Պէտք է յաջողից արդեօք, հակառակ այն մեծամեծ դժուարութեանց, որոնք կան ներկայում եւ սպասելի են մօսիկ սպազայում։ Գործի համար անհրաժեշտ նոգեւոր ոյժեր պատրաստել։ Նորա կարծիքով Հայոց եկեղեցւոց իսկական մեծ կարիքը ընդհանուր ժողովրդական կրթութեան սպազութիւնն է, իսկ դորա համար անհրաժեշտ պահանջ նոգեւորական դասի կրթութեան մակերեւութը ուսաժամանել։ Որ այդ այդպէս է անշուշտ մենք ամէնքս զգում ենք, մեզ պէտք է զարդեցնէ աւելի այն հարցը, թէ ինչ դժուարութիւններ են արգելք վնասում այդ զգացումն ուղիղ եւ կենուանի կերպով արտայայտելու եւ գործ զարձնելու։

Մենք ուրիշ անգամ էլ ասել ենք, որ միակ իսկական դժուարութիւնն ու յանցանքը այն չ'է, թէ Հայոց եկեղեցւոց ներկայացուցիչները չեն աշխատում։ Կրթուած նոգեւորականների թիւը սազմացնել եւ նոցա միջոցով նոգեւոր կրթութիւն զարգացնել ժողովրդի մէջ։ Խորի յաջող լուծման նորա մեծապէս նարա-

տել կարող են հարկաւ։ Հայ առաջնորդները կարող են առելի մեծ շափով կրթուած բահանաներ ձեռնադրել իրենց թեմիթում եւ տգետների թիւը սպականեցնել քան այժմ՝ անում են. բայց մեծ անարդարութիւն է ամեն ինչ նոցանից կախուած համարել։ Այս հանգամանքը, որ ներկայում հայոց դպրանցներից եւ ծեմարանից ելած բազմաթիւ երիտասարդներ սպարապ թափառում են մեծ քաղաքների փողոցներում։ ամեն տեսակ շարքաշոթիւն յանձնն են առնում եւ պատրաստ են իրենց կրթութեան թուրովին անհամապատասխան նոյն իսկ ստորացուցիչ սպաշտներ կառարել, ույց բահանայ չեն լինում՝ պատահական երեւոյթ չ'է, մի քանի անձանց քմահածութեան արդիւնք։ Այս երիտասարդների մեծամասնութեան կրթութիւնը տարաբաղաբար այնպէս է զնացել, որ նոգեւորական կրտումը գրեթէ ոչ մի զրահի կողմէ չունի նոցա համար, եւ միայն նիւթական կարիք կարող է սախթել նոցա յանձն առնելու այն բայց արդեօք որդափ սպանվութիւն է ներկայացնում հայ նոգեւորականի նիւթական վիճակը։

Ինչ վերաբերում է կուսակրօն նոգեւորականութեան, յատկապէս ս. Էջմիածնի միարանութեան մենք նախորդ համար մէջ ակնարկեցինք արդին, որշափ անհեթեթ են հասարակութեան մի քանի կառերի մէջ նոցա մասին տարածուած կարծիքները։ Այսուամենայնի դեռ վերջին օրերս մի թոթակից պնդում էր, թէ ս. Էջմիածնի արեգաները (ձրի մնակարան, ձրի կերակուր եւ 300 ր. ոսմիկ ստանալով) լրտերի կեանք են վարում։ Իսկ մի որիշը մեղադրում էր Տփիսի բահանաներին, որ փոխանակ մի զարթական բահանայի իրենց ծախրով թաղեւու նարուտ զանառականի օգնութեան են վիմել։ Շույլութիւն է համարուում որեմա, որ ս. Էջմիածնի միարանը (թէ կուզնա հինգ սպաշտոն ունենայ եւ առաւտուից մինչեւ երեկոյ աշխատէ) ունի զիտէ որ մնկերակցից ժառանգութիւն մինացած մի զորք է փոխել իր սենեակում եւ երկու տեսակ կերակուր է ոտում ուսիններին, տաք ոսպաթան պասերին. մինչ զարթականից չոր հացով պէտք է բառականանայ. Շընալութիւն է համարուում որ մի քանի քաղա-

* Քարգեց. „Եւստիակ Յօնուանուան” ամսարերից։

քացի քահանաներ իրենց բազմանդամ՝ ընտանիքը մնուցանելու եւ որպես կրթութիւն տալու միջոց գոնում են եւ այնպիսի պատառուուն հանդերձներով շրջող մուրացկաններ չեն, ինչպէս իրենց պաշտօնակիցներից շատ շատերը: Խեկ հանգամանքներին աւելի մօտ ծանօթ երիտասարդին ոչ ու Էջմիածնի ոսպաթանն է գրաւում եւ ոչ տէրտէրների կոպէկներ մուրալով ծեռք քերած գործուուր ապրուատը, նա իրաւ է այսօր շարքաշ կեանք է վարում, բայց կարող է յուսաւ որ վարդ հանգամանքները կփոխուեն, եւ ինքն էլ հարստութեան տէր կոտուայ ու պատրի կեանք կունենայ. մինչ հոգեւորականի կեանքը միշտ նոյն է, եւ որ իւկապէս անտանելին ամէնքի աշը վրան, իւրաքանչիւր պատառ հացը կարծես զողունի, որիշների ծեռքից խւած:

Սակայն հոգեւորական կոչումն անսախանմելի դարձնող մի որիշ, գուցէ աւելի զօրեղ պատճառ կայ՝ բարոյական պատճառ, թէ եւ սերտ կապ ունի կրկին նիւթական վիճակի հետ. այդ մեր ժողովրդի մէջ օրստօրէ զարգացող արհամարհանքն է, հակակրութիւնը դէպի հոգեւորականութիւնը: Մամուլի եւ գրականութեան մէջ մի քանի տամնեական տարիների ընթացքում եկեղեցւոյ ումէ իրարև թէ նորա այլ եւ այլ թերութիւնները բառնալու նապատակաւ, վարած անմիտ կոփու արժագանգ է զտել ամրութի գրեթէ բոլոր իսաւերում՝ շոյելով շատ դէպերում՝ նորա ստոր հակումները. եւ ահա այսօր մարդիկ եւ իրողութիւններ արհամարհնելի եւ պահարակելիքն զառնում մի շարք մարդոց աշըում՝ մի միայն նորա համար, որ եկեղեցական անոն են կրում: Կրթուած, դիցուք համալսարանական, երիտասարդ՝ հոգեւորական լինելով՝ կըորցնէ կարծես իր վարկը, եւ աւելի այն դասակարգի մօտ, որի կողմից աւելի բաշալերութիւն եւ օգնութիւն սպասելու իրաւունք ունէր: Նա կարծես այլ եւս իրաւունք շոյնի նախկին համարձակութեամբ մնանելու իր բարեկամների տները, կրթուած մարդոց շրջաններում գոնուելու, հասարակական խընդիրների մէջ խառնուելու. չէ որ կկասկածեն, թէ փողի համար է եկել մի շահ ունի.՝ ի՞նչ մեղաւոր է օք. քահանան, որ տնօրինէրը նորա համար մի զեղուցիկ միջոց լինելով հանդերձ

զոնէ տարին մի երկու անգամ իւր ծխականների տները մննելու, միեւնոյն ժամանակ իւր արդիւնքի զիսաւոր աղքարներից մէկն է: Սակայն եկէք տեսէք, որ մեր փարթամ մեծատուններից շատերը, սովորաբար կրթուած, հասարակական դիրք ունեցող մարդիկ՝ քահանայի երես շտեմնելու հոմար, իրենց կոպէկները ծառային են տալիս, որ դոնից ճանապարհ զնէ տուն օրնողներին: Մենք զայրանում ենք ի հարէէ, որ մի քահանայ այդ անպատճութիւնը տանել եւ իւր երեսին շալրուած կոպէկները վերցնել կարող է. մենք խոստվանուութիւնք, որ քահանաներն իրենք են մեծ շափով նպաստել իրենց պատիւն այդպէս զգեւուն եւ եթէ իրենց կոչման քարծրութեամբ վերայ կանգնած լինին, կատիպն կրկին յարգել իրենց եւ այլապէս վարուիլ. բայց իրաւացի է միթէ, որ այդպիսի վարմունքը միայն քահանաների վաստութիւնից է յառաջ գալիս. միթէ այն մարդիկ, որոնք զոնից են ճանապարհ զնում նոցա՝ յաճախ տելի ցած չեն թէ բարոյականութեամբ եւ թէ կրթութեամբ, շատ աւելի ցած մարդոց հետ շմ՛ն նստում ելնում:

Եիրաւի սիւ երկայն վերաբերուի մէջ փաթաթուած ցածութիւնն ու անքարոյականութիւնը աւելի են աշքի ընկնում եւ աւելի աշք ծակում: բայց այդ զարդով պէտք է լաւ կշուղատել նաեւ այն հանգամանքը, թէ հոգեւորականի վերաբերուին պատշաճ կեանք վարելու եւ ոիք պահպանելու համար որչափ շատ բան է պահանջուում՝ որչափ բարոյական եւ հոգեւոր կարողութիւն մանաւանդ արդի պայմաններում: Եւ ըստ այնմ՝ ոչ մի ջանք եւ հոգացողութիւն ընկնայել մարդիկ ասպարէզ հրավիրելու համար, որոնք այդ պահանջներին բաւականութիւն տալու համարձակութիւն եւ ոյժ կունենան: Մենք արդարացնել շենք կարող այն երիտասարդներին, որոնք մի որոշ շափով պատթաստութիւն ունին հոգեւոր կոչումն ընդունելու, բայց համարձակութիւն շունին մաքառման մէջ մննելու այն խոշնուների ումէ: որ մեր հասարակական կեանքը նոցա տաշ զնում է. կրկնում ենք՝ տոկուն, անժնազո՞ն, բարոյական գործունեութեան կենդանի օրինակներով միայն կարելի է տիրող նախապա-

շարումները փարատել եւ հոգեւորականութիւնը իւր կոչման բարձրութեան վերայ դնել: Սակայն իրական կեանքը հերոսներ՝ տոկոն եւ անծնազո՞ւ մարդիկ շատ չէ ստեղծում: իսկ մենք շատ հոգեւորականների պէտք ունինք, որոնք զոնէ փռք շափով իրենց կոչման համապատասխան լինէին, եւ այդպիսինները ասպարիզի վերայ չեն երևայ, քանի հասարակութիւնը հալածում է նոցա իւր նախապաշարումներով իւր դէսի հոգեւորականութիւնը ցոյց տուած արհամարհանքուն ու հակակրութեամբ: Այո՛ հոգեւորական զոցէ խիստ է այս դարձուածը, բայց ճըշմարտութեան հակառակ չէ: զիտակցական հալածանք չկայ հարկաւ, ժողովրդի մեծամասնութիւնը ցանկանում է լաւ հոգեւորականներ ունենալ, բայց նորա տրամարդութիւնն ու հակումները այնպէս չեն ուղղուած, այնպէս չէ նորա հոգեկան աշխարհի կազմակերպութիւնը, որ հոգեւորականութիւնը բաշալերութիւն զոնէ նորա կողմից:

Գերմանացի յօդուածագրու ուղիղ է նկատել, որ հոգեւոր ասպարիզի վերայ մեզ սպառնացող զլսաւոր շարիքը ոչ թէ տղիտութիւնը, ոչ թէ ամեն տեսակ նախապաշարումներ եւ թերութիւններ իւր նետ քերող անցեան է, այլ սիսալ կրթութիւնը: Քաղաքակալութիւնը արագ քայլերով յառաջ է զնում՝ զիտութիւն եւ նախապաշարումներ կամայ ակամայ տեղի կտուն նորան, բայց փոխարէնը զարգանում է եւ կլանամ՝ ամեն ինչ նիւթական շահների նետամուտ եղող մի հոգի, որին այլեւս ոչինչ չէ նետաքրքրում: Ինչ որ նիւթական շրջանից դուրս է, որ մի տեսակ ընազդմանը խորշում է այն բոլորից, ինչ որ հոգեւորական անուն է կրում իւր վերայ: Անա այդ մեծ թըշնամի դէմ պէտք է կրի սկսել հոգեւոր զենքով, իսկ որպէս զի հոգեւոր զէնքը գործածելու համար յօժարամիտ եւ ընդունակ ախյեաններ շատ զոնումն: հարկաւոր է նոցա առաջ ծանապարհ հարթել հարկաւոր է նիւթական եւ քարոյապէս քաշալերել նոցա, եւ այլ պէտք է անի ոչ միայն եկեղեցական իշխանութիւնը, այլ առաւել այն հասարակութիւնը, որ ինքն իւր միջին սուսանալով յառաջիկայ կիւրակիններից մէկին եկեղեցւոյ մէջ, ի լուր ժողովրդեան աւելի ընդարձակօրէն խօսել այս մասին: Ս. պատարագին Վեհափառ Հայրապետը եկեղեցի էր իջել:

զում՝ պէտք է անեն այն բոլոր մարդիկ, որոնց մէջ դեռ հոգեւոր նախանձախնդրութիւն մասցել է:

ՄԱՅՐ ԱԹՈՒՐ.

Սորբն Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը՝ ի մեծ ուրախութիւն Միարանութեան և իւր հօտիւ Մայր Աթօռ ժամանեց ողջամբ ամսոյ 20 ին, ուրբաթ երեկոյ ժամը 5 ին: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ամրող Միարանութիւնը զգեստաւորուած, Շեմարանի ուսուցիչներն և աշակերտները, և ժողովրդի հօծ բազմութիւնն սպասում էին վանքի արտաքին զարպասի մօտ, ուշ չդարձնելով գարնան առատարեր առաջին անձրեկի մանր աեղալուն, այլ լի միայն մի փափազով, ժամ առաջ տեսնել այնշատ պատկառելի դէմքն այն ծերունի անվեհներ Հոգուապետի, որ մի անգամ ևս այսպէս արհամարհնց ձմեռուայ խառութիւնը և երկայն ճանապարհի նեզութիւնները՝ Տիրոջ ողորմութեամբն ու իւր երիտասարդական անսպառ եռանդի ուժով իւր հօտի կարիքներին հանել կարողացաւ, և պիտի կարողանայ անշուշտ զեռ երկար տարիներ: — Հանգիստաւոր թափորով Վեհափառ Հայրապետը գէպի Մայր Սամար առաջնորդու եցաւ, ուր իջման բաց սեղանի առաջ, ջերմագին մաղթանքներ վերառաքելով գէպի Լուսաւորչի գահի արթուն Պահապանը, միարանութեան ուղեկցութեամբ Վեհափառ ելաւ հանգստանալու: Արգէն տարաժամ էր օրը Յաջորդ օրն ևս փոքր ինչ ակարութիւն և յօդնածութիւն զգալով՝ Սորբն Սրբութիւնը միայն ամենաանհրաժեշտ զործերով զրադուել կարողացաւ. իսկ Միարանութեանը, Շեմարանի ուսուցչական խմբին և այլ այցելուների ընդունեց յաջորդ կիւրակի: օրը, Ս. պատարագից առաջ և յետոյ, օրհնեց և պատմեց մի քանի ճանապարհորդական ապաւորութիւններ, խօսանալով յառաջիկայ կիւրակիններից մէկին եկեղեցւոյ մէջ, ի լուր ժողովրդեան աւելի ընդարձակօրէն խօսել այս մասին: Ս. պատարագին Վեհափառ Հայրապետը եկեղեցի էր իջել: